

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

« _____ » _____ 2019թ

N ---- Ն

ՈՐՈՇՈՒՄ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՓՈՂՈՑԸ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉԻ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Գրիգոր Լուսավորիչ փողոցը անվանափոխել Սուրբ Գրիգոր Լուսավորչի փողոց:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«ԼՈՒՅՍ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ

Թ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՏԵՂԵՎԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՓՈՂՈՑԸ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի երրորդ Հանրապետության հռչակումից հետո, 1990-ական թվականներից սկսված մայրաքաղաք Երևանում մի շարք փողոցներ և պողոտաներ անվանափոխվեցին և սկսեցին կրել ականավոր հայորդիների անուններ, որոնցից մեկը անվանակոչվեց Գրիգոր Լուսավորչի փողոց:

Գրիգոր Լուսավորիչը եղել է եկեղեցական, քաղաքական գործիչ, 302 թվականից Հայոց եպիսկոպոսապետ: Նա դեռևս 287 թվականին գալով Մեծ Հայք կարողացավ Տրդատ Գ թագավորի արքունիքում դառնալ պալատական պաշտոնյա և քրիստոնեական ուսմունքի համար հող նախապատրաստել Վաղարշապատ մայրաքաղաքում: Հռոմի Դիոկղետիանոս կայսեր օգնությամբ 287 թ-ին Մեծ Հայքի թագավորության գահը բարձրացած Տրդատ Գ-ն սկզբում հալածեց քրիստոնյաներին՝ իբրև քաղաքական վտանգավոր ուժի, իսկ նրանց պարագլուխ Գրիգոր Լուսավորչին նետեց Արտաշատ քաղաքի Խոր Վիրապ կոչվող հանցագործների համար նախատեսված բանտը: Սակայն շուտով համոզվելով, որ Հայաստանի նկատմամբ Հռոմը վարում է խարդախ ու զավթողական քաղաքականություն, Տրդատը հիասթափվեց նրա «դաշնակցությունից» և դադարեցրեց նաև քրիստոնյանների հալածանքները: Քրիստոնեությունը, որը I-III դարերին Ասորիքից ու Փոքր Ասիայից ներթափանցել և տարածվել էր Հայաստանում, 3-րդ դարի վերջին արդեն դադարել էր սոսկ ճնշվածների կրոն լինելուց: 301-ին քրիստոնեությունը Հայաստանում ճանաչվեց պետական կրոն:

Գրիգոր Լուսավորիչը հայ եկեղեցու հոգևոր Հայրերի կողմից դասվել է ավագ սրբերի կարգին, այնուհետև դասվել համաքրիստոնեական սրբերի շարքին:

Յուրաքանչյուր քաղաքի փողոցի անվանումն իր մեջ ներառում է պետության և մշակույթի հետ կապված կարևոր տեղեկատվություն: Այն ներկայացնում է քաղաքի և շրջակայքի պատմությունը, տարածաշրջանի բնական-աշխարհագրական պայմանները, կրոնի, հավատքի կամ գաղափարական համոզմունքների, քաղաքային բնակչության սոցիալական առանձնահատկությունների և այլնի մասին: Բացի այդ, դրանք իրենց ներդաշնակ հնչեղությամբ և ամրագրված իմաստով կարող են ազդել քաղաքի հոգևոր մթնոլորտի, ազգաբնակչության հոգևոր-բարոյական վիճակի վրա:

Գրիգոր Լուսավորչի անվամբ կոչված փողոցը ներկայումս չի ընդգրկում «սուրբ» ածականը, ինչն անհրաժեշտ է շտկել, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայ ազգը առաջինն է, որ քրիստոնեությունը ընդունել է որպես պետական կրոն: Աշխարհը մեզ ճանաչում է առաջին հերթին հենց այս հանգամանքից ելնելով: Մենք մշտապես պետք է բարձր պահենք և՛ եկեղեցու դերը հայ հասարակության մեջ, և՛ արժարժենք մեր Սրբերի անունները, այդպիսով նաև կրթելով ապագա սերունդներին, և, ինչո՞ւ չէ, աշխարհին ցույց

տանք, որ մեր մշակույթը, պատմությունն ու արժեքներն են բնորոշում մեր ազգային ինքնությունը:

Առաջարկվող այս անվանափոխությունն ունի նաև տուրիստական լուրջ նշանակություն: Աշխարհի բազմաթիվ երկրներում փողոցներն ու հրապարակները, որոնք կրում են սրբադասված մարդկանց անուններ ունեն հատուկ գրավչություն, ինչպես նաև զբոսաշրջիկների շրջանում առաջացնում են հետաքրքրություն տվյալ երկրի և ժողովրդի նկատմամբ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում եմ Երևանի Կենտրոն վարչական շրջանի Գրիգոր Լուսավորիչ փողոցն անվանափոխել Սուրբ Գրիգոր Լուսավորչի անվան փողոց:

«ԼՈՒՅՍ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ

Թ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՓՈՂՈՑԸ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Երևան քաղաքում Գրիգոր Լուսավորիչ փողոցը Սուրբ Գրիգոր Լուսավորչի փողոց անվանափոխելու մասին» որոշման նախագծի ընդունման դեպքում երևան քաղաքի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՓՈՂՈՑԸ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ/ԿԱՍ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Երևան քաղաքում Գրիգոր Լուսավորիչ փողոցը Սուրբ Գրիգոր Լուսավորչի փողոց անվանափոխելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջացնում:

«ԼՈՒՅՍ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ

Թ. ՎԱՐԴԱՆՅԱՆ